

ժամ է՝ անձնագրհուսութեան, ով ունի քանքար քարոզութեան՝ թող յառաջ գայ և իւրեան անձն իրրե Իսահակ, կամաւ զնի Ազգի և Եկեղեցոյ պայծառութեան համար, ով ունի նիւմականի զօրութիւն, թող օպնէ մեր Աւհափառ Հօր՝ Նորա զանազան ազգօգուտ կարօտութիւնների մէջ, և ին, և ին և ոչ ունայն բարանջմուկքով մորրացնել միամիտների սիրտը, ստացնել նոցա ջիւմեռանդութիւնը, անօգուտ քարոզել նոցա աստուածապաշտութիւնը և ին, և ին, «Աւյ ձեզ դպրաց և փարիսեցոց կեղծաւորաց, զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք ոչ մտանէք, և որոց մտանենն՝ չտայք թող մտանել,»

Վ. Շ. ԱՐԱՄ.

Այս առթիւ մեր խօսելիքը հետագայ ամսաթերթից կ'ընդունվի:

Ասորախանու մէջ երբեմն Հայոց ունեցած եւ ի ներկայս խափանեալ մնացած տպարանի վերայ հետագայ տեղեկութիւնը գրուած եւ խնդրուած է հրատարակել:

ԽՈՓԱՆԵԱԼ ՏՊԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԱՍՏԻՍԵԱՆ ԲԱՂԱՔԻ.

Բարձրագոյն հրամանաւ յամին 1795 յաւուրս թեմակալութեան երջանկայիշատակ Առաջնորդի Հայոց համայն Ռուսաստանեայց Տեսուն Յովսէփայ Արքեպիսկոպոսի Արդուութեանց՝ բազեալ է յԱսորախան Տպարան, ուր տպեալ են ըստ մեծի մասին գրեանք Հայոց և թարգմանութիւնք ճառից, քարոզից, եկեղեցական արարողութեանց և աղօթից ի Ռուս լեզու, Յամին 1797, Ասորախանայ նահանգային կառավարութիւնն միջամխելով ի զործ բացեալ Տպարանի՝ պահանջեալ է զինչ ինչ տեղեկութիւնս ի Թեմական Իշխանութենէ, Գիր. Սրբազան

Արհն Յովսէփ տուեալ է զպատշաճաւոր պատասխանի նմին կառավարութեան. Նահանգային իշխանութիւնն յետ ընդունելոյ զգրութիւն Առաջնորդի, յայտարարութեամբ ի 10 Նոյեմբերի նոյն ամի համար 32891 հասուցեալ է զայնմանէ ի տեղեկութիւն կառավարիչ Սենաթին, խնդրելով զԲարձրագոյն լուծումն ենթադրելոյ զայն Ազգային Տպարան՝ տեսութեան Ս. Սինօդին Ռուսաց. ընդ նմին հարցեալ է թէ որո՞յ վերահասութեան և զբաքնութեան ունին պատկանիլ այսուհետեւ տպեալ գրեանք ի նմին տպարանի և կամ ի վերայ ո՞րպիսի հիման մարթ է թողարկել զգոյութիւն Տպարանի Հայոց, Առ այս յայտարարութիւն և հարցումն նահանգային իշխանութեան Ասորախանայ՝ կառավարիչ Սենաթն հրամանագրութեամբ յ2 Ապրիլի 1798 ամի համար 6168, տուեալ է նմին զիտեալ, թէ Նօրին կայսերական Մեծութիւնն հրովարտակաւ ի 25 Մարտի նոյն ամի բարեհաճեալ է հրամայել, զտպարանն Հայոց Ասորախանայ թողուլ ընդ տեսութեամբ և կառավարութեամբ Հոգևոր Իշխանութեան Հայոց, զգրքնութեան պաշտօն տպեալ գրեանց Հայոց լեզուի յանձնել Արքեպիսկոպոսին Հայոց Յովսէփայ, և վասն քննելոյ զթարգմանութիւնս և զտպեալ գրեանս Ռուսաց լեզուի՝ նշանակել զօմն օգնական Արհնոյն. բայց ոչ յետ բազմաց ինչ աւուրց՝ նոյն կառավարիչ Սենաթն կրկին հրամանագրութեամբ ի 27 Մայիսի նոյն ամի համար 9362, յանուն Յովսէփայ Արքեպիսկոպոսի, զպաշտօն զբաքնութեան Ռուսերէն և Հայերէն տպեալ գրեանց՝ եղեալ է ի վերայ հմտութեամբ Հայոց և Ռուսաց լեզուի բարեհաճաւեալ Գրիգոր վարդապետի, որ գտեալ է պաշտօնիւ առ Գիր. Սրբազան Առաջնորդն և ընդ նմին Սենաթն տուեալ է զիտեալ զայնմանէ պարօն նահանգապետին և նահանգային կառավարութեան Ասորախանայ. Ըստ այսոցիկ տեղեկութեանց՝ Ասորախանայ Հայոց տպարանն բացեալ է ի վերայ հիման Բարձրագոյն թողտուութեան, գրեալ է ընդ տեսութեամբ Հոգևոր Իշխանութեան, և տեալ է մինչև ցաւուրս Թեմակալութեան Յովհաննէս Արքեպիսկոպոսի Առաջնորդի Հայոց

Համայն Ռուսաստանեայց զինի այնքիկ ըստ յորպիսի զօրաւոր և օրինական յարգեցուցիչ փաստից դադարեալ կայ ցոյսօր գոյութիւն Հայոց տպարանի Աստրախանայ՝ տակաւին կարօտի Հաւաստի տեղեկութեանց: Իսկ թէ նախայշեալ տպարանն ուստի՞ և ընդ ձեռն որոյ բերաւ յԱստրախան, և յորպիսի արդեանց գնեցաւ այն, զայնմանէ Հանդամանօրէն մարթ է տեղեկանալ ի վերջին թերթից Ընդհանրական կոչեցեալ մատենի 'Ներսիսի Ընորհալոյն' տպիւոյ ի Ս. Պետերբուրգ ի տպարանի Խաղարեանց յամի Տեառն 1788 և ի թուին Հայոց ՌՄԼԷ:

ՅՈՎՍԷՓ Ա. ՔԱՀԱՆԱՅ ԲՈՒՆԵԱԹԵԱՅՑ.

ՌԱՏՐՈՆ Ի ՎԱԳԱՐՇԱՊԱՏ.

Ամենայն դասակարգի մարդկան մտաւոր և բարոյական դարգացման նպատակու արդիւնաւոր միջոցներէն մէկը լուսաւորութեան դարուս մէջ իրաւամբ համարուած է թատրոնական ներկայացումը, մանաւանդ երբ թատրոնական բեմին վերայ ներկայացած դուսանական խաղերը ընտրութեամբ եղած են և տեղական հասարակութեան ունեցած զարգացման աստիճանին համապատասխան են իւրեանց բովանդակութեամբն ու հասկանալի բարբառովը:

Վաղարշապատի ժողովուրդը, որ ուրիշ տեղերու Հայոց նման սիրով և եռանդեամբ կ'ստամակէր բարձրացնել հոգեւոր տեսութեան արդեան ուսումնասէր ուղղութեանը՝ ջանալով ըստ կարի բարւոքել իւր մէջ դժուած երկոցունց սեռից զարոյցները, բաւական ժամանակէ հետէ զգացած էր այդ զարոցաց համար այլ և այլ դրամական հաստատուն աղբիւրներ զտնելու կարեւորութիւնը, և ահա այս տեսակ աղբիւրներուն կարգը զատուեցաւ այստեղ՝ սկսեալ 1874 թուականից նաև թատրոնական ներկայացումը, որ յայսմհետէ աւելի կարգաւորեալ կերպարանք պիտի ընդունի, ենթարկուելով կանոնաց և առանձին կանոնադրութեանց բարերար ազդեցութեանը՝ շնորհիւ հիմնադրի նորին Պ. Մովսիսի Վարդանեանց Տիկիսեցոյ:

Մինչև ցայժմ այդ վերահաստատեալ թատրոնի վերայ, որ զետեղուած է արականաց Գարոցի դահլի-

ճումը, միայն երկու ներկայացումն եղած է, և երկու անգամ եւս մի և նոյն «Շուշանիկ» ողբերգութիւն ու «Երկուսն էլ ֆաղսած են, երկուսն էլ փող չունին» կատակերգութիւնը: Կրկնութիւնը եղած լինելով ըստ խնդրոյ ժողովրդեան, տարակոյս չմնար, որ հասարակութիւնը արժանի ըրած է տեղոյս թատրոնը և այդ երկու խաղերը իւր կատարեալ համակրութեան:

Մեր առաջին ներկայացման ակննատես լինելու բազմը չունեցանք եղանակին յանախմբաւ ծիւնարեր և աղմային օր մի մեզ շնորհելուն պատճառաւ, բայց լսած լինելով այլոց գովարանութիւնները, մանաւանդ նորիկ վիճակորդականաց սրտալիբ հաճութեան ձայները, երկրորդ ներկայացման ժամանակ՝ օգուտ քաղելով օղոյ քաղցրութենէն, որ վաղարշապատի մէջ սովորութիւն ունի հաճոյագոյաց օրիորդի նման շուտ շուտ իւր ուրախութիւնը թափման և միզոտ տխրութիւնը զեղած իժաղ կերպարանաց փոխարկել, փութացինք մտադիւր սիրով ստուղել մեր լսածներուն ճշդութիւնը, և կիսատովանիմք, որ մեր ակնկալութեան էն վեր յաջողած տեսա՞րք թատրոնական խաղերը թէ գերասանից ընդունակութեան և թէ հանդիսականաց արտադայտած բերանալիբ ամակրութեան նկատմամբ, որով այս համազունը տարինք, թէ Վաղարշապատի թատրոնի դոյութիւնը մեր մէջ անշուշտ ապահովուած պիտի լինի, եթէ չսպակասին ներկայ եռանդուն դերատան — երիտասարդաց կողմանէ հաստատուն կամք քարեսիրութեան, միաբանական զգացման, և որ մեծն է՝ սրտացաւ կարեկցութեան տեղոյս Գարոցաց յառաջադիմութեան մասին ըստ մտաց Կոնզակի Վեհափառ Հայրապետին ամենայն Հայոց:

Բնական է որ դերասանից մէջէն ոմանք աւելի, այլք նուազ ճարտարութեամբ պիտի կատարէին իւրեանց դերերը, ըստ որում թատրոնական արուեստին հմուտութիւնը երկարատեւ փորձառութեամբ ձեռք կը ձգուի, մինչդեռ տեղոյս թատրոնը իւր առաջին քայլը նոր սկսած է ընել, յոյսը դնելով հասարակութեանը վերայ. այսու ամենայնիւ մեր և ամենեցուն զարմանաց և շնոր՝ակալեաց իրաւամբ արժանացաւ Տիկիսն Վարդանեանցը Շուշանիկի դերին մէջ, որ իւր պարզ և բնական ձևերովը, իւր որոշ ու քաջանիւն արտասանութեամբը, նա մանաւանդ